## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԲՆ-ԾՁԲ-19/01» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունվարի 23-ին կնքված «ԲՆ-ԾՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրում 201 9 թվականի մայիսի 29-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության պատճառ՝ | Պայմանավորված բնապահպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված հին տրանսպորտային միջոցի օտարմամբ և նոր մեքենայի գրանցմամբ: |
| Փոփոխության նկարագրություն՝ | Պայմանագրի 4.1 և 4.1.1 կետերում «803 000 (ութ հարյուր երեք հազար)» բառերը փոխարինվել է «810 000 (ութ հարյուր տաս հազար)»բառերով: |
| Փոփոխության հիմնավորում՝ | Պայմանագրի 7.5 կետ: |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Ջոհրաբյանին**:


Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Բնապահպանության նախարարություն:**

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1
## «23» հունվարի 2019թ. թիվ ԲՆ-ԾՁԲ-19/01 պայմանագրի

ք.Երևան «29» «05» 2019թ.

Բնապահպանության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Ջիլավյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ինգո Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Ա.Մելիքսեթյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 2019 թվականի հունվարի 23-ին կողմերի միջև կնքված «ԲՆ-ԾՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրի 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2019 թվականի հունվարի 23-ին կնքված «ԲՆ-ԾՁԲ-19/01» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. Պայմանագրի 4.1 և 4.1.1 կետերում «**803 000 (ութ հարյուր երեք հազար)**» բառերը փոխարինել «**810 000 (ութ հարյուր տաս հազար)**» բառերով.

1.1.2. Պայմանագրի վճարման ժամանակացույց հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Բնապահպանության նախարարություն** | **«Ինգո Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ** |
| ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք | ք.Երևան, Հանրապետության 51.53 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ |
| ՀՀ 900011018646 | ՀՀ 217001154806001 |
| ՀՎՀՀ 02507198 | ՀՎՀՀ 02535733 |
| Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ | «Ինգո Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն |
| **Վ.Ջիլավյան** | **Ա.Մելիքսեթյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված
«29» «05» 2019թ. կնքված
համաձայնագիր №1
№ ԲՆ-ԾՁԲ-19/01 պայմանագրի

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի ժ/պ | «Ինգո Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ-ի գործադիր տնօրեն |
| Վ.Ջիլավյան | Ա.Մելիքսեթյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով) | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 66511170 | Բնապահպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայություններ (ԱՊՊԱ ծառայություն) | 803 000 | 803 000 | 803 000 | 803 000 | 810 000 | 810 000 | 810 000 | 810 000 | 810 000 | 810 000 | 810 000 | 810 000 | **810 000** |